


19347

1905



2010.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ

ՓԱՐԻԶԻ



37  
2-24

Տ. ՏԱՐՈՒԹՅԱՆ

2001

1905

~~370~~  
~~203644~~

~~37~~  
Z-24

ՀԱՅ  
ՀԱՅ  
10-C610

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ.Ա.Ց

ՈՒՍՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՓԱ.ՐԻԶԻ

85b

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ Ա Յ

## ԱՐԱԲԻՆԴԱԿԱՑ



# U n i p b u s



**Վաւերացիալ Թրամասկան Համապետութեալը**



Φ Ο Ι Σ Π Ι Σ

ՏՊԱԳՐ. Տ. ՏՕՂՐԱՄԱԶԵԱՆ

— 1905 —



ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ. Ա. Յ.

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՓԱՐԻԶԻ

---

Imp. D. DOGHRAMADJIAN, 18, Rue des Gobelins, PARIS.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Միութիւնը . — Նպատակը . —  
Կազմակերպութիւնը .



ՅՈՒԹԻԱԾ 1.

Հայ Ուսանողական Միութեան նպատակն է .  
Մտաւորական եւ ընկերական կապեր հաստատել Փարփղի Հայ Ուսանողներու եւ Ուսանողուներու մէջ , որպէս զի անոնք կարենան միմեանց օգնել բարոյապէս եւ նիւթապէս :  
Ծեր . — Փարփղի Հայ Ուսանողական Միութեան

Թիւնը Քաղաքական և Կրօնական հարցերով չըգրադիր :

ՅՕԴՈՒԱԾ 2.

Միութիւնը կը բազկանայ .

Ա. Գործօն անդամներէ .

Բ. Համակիր »

Գ. Պատուաւոր »

Դ. Բարերար »

ՅՕԴՈՒԱԾ 3.

Գործօն անդամ ընդունուելու համար՝ պէտք է .

Ա. Պաշտօնաթուղթով՝ մ'ասկացուցանել թէ արդէն իրեւ ուսանող արձանագրուած է Փարփառ Համալսարանի ո եւ է բաժնի կամ կրթական ո եւ է բարձրագոյն հիմնարկութեան մէջ :

Բ. Ներկայացուած լինիլ Միութեան երկու անդամներու կողմէ եւ ընդունուած՝ Գործադիր Մարմնէն :

Գ. Վճարել ամսական մէկ ֆրանկ անդամավընար :

ՅՕԴՈՒԱԾ 4.

Իւրաքանչիւր անդամ միայն մէկ ձայնի եւ մէկ պաշտօն ստանձնելու իրաւունք ունի :

ՅՕԴՈՒԱԾ 5.

Գործադիր անդամ լինելէ կը դադրին ամէն անոնք որ՝

Ա. Զե՞ս գործադրեր Միութեան կանոնները եւ լողանուը ժողովի որոշումները :

Բ. Զե՞ս վճարեր, յաջորդաբար երեք ամիս, ամսական անդամավճարը :

Գ. Կը բացակային, իրարու յաջորդող երեք նիստերու միջոցին, Միութեան հաւաքումներուն, առանց իրենց բացակայութեան բանաւոր պատճառները գրաւոր կերպով լիմացնելու Գործադիր Մարմնի նախագահին :

Դ. Կը գտնուին Միութեան վարկը լրջօրէն արատաւորող անվայել ընթացքի մը մէջ :

Ե. Կը գործադիր Մարմնը կրնայ Միութեան հեռացնել ո եւ է անդամ միմիայն խղճամիտ քննութենէն մը յետոյ, որուն պէտք է օրինաւորապէս հրաւիրուի խնդրի առարկայ եղած անդամը՝ իր բացարութիւնները տալու :

ՅՕԴՈՒԱԾ 6.

Իւրեւ Համակիր անդամ կ'ընտրուին՝

Ա. Ամէն Հայ որ կը պատրաստուի մտնել Փարփառ Համալսարանի ո եւ է բաժնին մը կամ կրթական բարձրագոյն հիմնարկութիւն մը :

Բ. Յիշեալ հաստատութիւններու ամէն աղատ ունկնդիր :

ՅՈՒՂԻԱԾ 7.

Համակիր անդամներն ունին մի եւ նոյն պարտականութիւններն ու իրաւունքներն ինչ որ Գործօն անդամները , բացի՝

Ա. Չեն կրնար քուէարկել այն ամէն Ընդհանուր ժողովներուն մէջ , ուր պէտք է բարեփոխութիւն Միութեան Կանոնադիրը :

Բ. Չեն կրնար ընտրուիլ Գործադիր Մարմինդամամբ :

ՅՈՒՂԻԱԾ 8.

Պատուաւոր անդամ կը նկատուի , իր առաջարկին վրայ , այն ամէն անհատ — առանց ազգի , սեռի եւ տարիքի խտրութեան — որ տարեկան կամաւոր վճար մը կընէ Միութեան : Պատուաւոր անդամը Միութեան գործերուն միջամբ տելու իրաւունք չունի :

ՅՈՒՂԻԱԾ 9.


Գործադիր Մարմինը Միութեան Պատուաւոր անդամ կ'անուանէ նոյնպէս այն անձերը , որոնք բարոյապէս կը նպաստեն Միութեան բարդաւաճման :

ՅՈՒՂԻԱԾ 10.

Գործադիր մարմինը՝ Պատուաւոր անդամակցութենէ հրաժարուած կը նկատէ անոնք որ , մէկ տարուան միջոցին , չեն վճարած իրենց տարելըց արը :

ՅՈՒՂԻԱԾ 11.

Բարեւար անդամ անունը կ'ստանայ Միութենէն ամէն անհատ՝ որ 500 ֆրանկի միանուագ վճար մը ( կամ համարժէք նուիրատութիւն մը ) կընէ Միութեան :



## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վարչութիւն .

### ՅՕԴՈՒԱԾ 12.

Միութեան գործերու վարումը մէկ տարուան  
համար կը յանձնուի Գործադիր Մարմնի մը , որ  
կ'ընտրուի դադանի քուէարկութեամբ եւ ձայնե-  
րու մեծամասնութեամբ :

### ՅՕԴՈՒԱԾ 13.

Գործադիր Մարմնը լինքը կորոշէ իր դիւանը ,  
բաղկացած հինգ անդամներէ . մէկ Նախագահ . —  
մէկ Քարտուղար եւ մէկ Փոխ-Քարտուղար . —  
մէկ Գանձապահ . — մէկ Գրադարանապետ :

### ՅՕԴՈՒԱԾ 14.

Գործադիր Մարմնը կրնայ վերընտրուիլ :

### ՅՕԴՈՒԱԾ 15.

Գործադիր Մարմնը կը հաւաքուի ամէն շա-  
բաթ , ( իր Նախագահին եւ Քարտուղարին հրա-  
ւերին վրայ ) քննելու համար իւր նիւթական հա-  
շվաները , վաւերացնելու եւ յատկացնելու ծախ-  
քերը , որոշելու Ընդհանուր Ժողով հաւաքելու

թուականը , եւ առ հասարակ կարգադրելու Մի-  
ութեան այն ամէն ընթացիկ գործերը , որոնք չեն  
կարօտիր Ընդհանուր Ժողովի անմիջական որո-  
շումներուն :

### ՅՕԴՈՒԱԾ 16.

Երեք անդամներու ներկայութիւնը անհրա-  
ժեշտ է Գործադիր Մարմնի նիսաը վաւերական  
նկատելու համար :

## ՄԱՍՆ ԵՐԻՌՈՐԴ

Հնդիանուր ժողով .

ՅՈՒՂԻԱԾ 17.

Գործօն եւ Համակիր անդամներէ բաղկացած  
Բնդհանուր Ժողովը տեղի կ'ունենայ երեք ամիս  
անդամմը , որուն օրակարգը կը ներկայացնէ Գոր-  
ծադիր Մարմինը :

Իւրաքանչիւր Բնդհանուր Ժողով կ'ընտրէ օր-  
ուան նիստին համար իր Նախագահն ու Քարտու-  
ղարը , որոնք պէտք է ստորագրեն նիստին ատե-  
նագրութիւնը :

Ընդհանուր Ժողովը կը ծանօթանայ Վարչու-  
թեան տեղեկագրէն , միութեան նիւթական ու  
բարոյական կացութեան , կ'որոշէ « օգնութեան  
մնտուկին » յատկացուելիք գումարը , եւ կը վա-  
ւերացնէ անցած շրջանի հաշիւները :

ՅՈՒՂԻԱԾ 18.

Գործադիր Մարմի կամ երեք Գործօն ան-  
դամներու առաջարկին վրայ , Միութիւնը կարող  
է հրաւիրուիլ Բնդհանուր Ժողովի :

## ՄԱՍՆ ԶՈՐՅՈՐԴ

Միութեան նիւթականը .



ՅՈՒՂԻԱԾ 19.

Միութեան հասոյթի աղբիւրներն են .

Ա. Իր անդամներու բաժնեվճարներն ու նը-  
ուելները :

Բ. Իր կազմակերպած դասախոսութիւններէն  
եւ երեկոյթներէն գոյացած գումարը :

Գ. Իր անուան արուած նուիրատուութիւն-  
ները , կամակները եւ նպաստները :

Դ. Իր գոյքերու եւ ամէն կարգի արժէքներու  
եկամուտները :

ՅՈՒՂԻԱԾ 20.

Գանձապահը կրնայ մշտապէս իր տրամադ-  
րութեան տակ ունենալ 50 ֆրանկ , Միութեան  
ընթացիկ ծախսերուն համար :

Մնացորդ արամազրելի գումարը կը յանձնուի  
Caisse de Dépôts et Consignations-ին :

ՅՈՒՂԻԱԾ 21.

Պահեստի գումարը կը կազմուի .

Ա. Գործօն , Համակիր եւ Պատուաւոր անդամներու բաժնեվճարներուն տասներորդ մասի նախահանումովը :

Բ. Բարերար անդամնէրէն ստացած նուէրներուն համագումարովը :

ՅՈՐՈՒԱԾ 22.

Պահեստի դումարը անձեռնմխելի է : Իր եւ կամուաները կրնան գործածուիլ ընթացիկ ծախըերու : Այսու հանդերձ , երբ հարկը պահանջէ , եւ կամ Գործադիր Մարմնի առաջարկութեան վըրայ , այդ գումարէն մաս մը կրնայ գործածուիլ Միութեան ծախքելուն , եթէ Ընդհանուր ժողովը իր բոլոր անդամներու երեք քառորդի մեծամասնութեամբ տայ իր հաւանութիւնը :

ՅՈՐՈՒԱԾ 23.

Միութեան հասոյթները կը գործածուին՝

Ա. Ճոխացնելու Միութեան գրադարանը :

Բ. Նպաստելու իր կարօտ անդամներուն :

Գ. Կազմակերպելու դասախոսութիւններ եւ երեկոյթներ :

Դ. Միութեան բոլոր միւս ընթացիկ ծախքերու :

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գործունեութիւնը .

ՅՈՐՈՒԱԾ 24.

Միութիւնն ամէն ամիս կ'ունենայ բարեկամական հաւաքումներ :

ՅՈՐՈՒԱԾ 25.

Միութիւնը կը կազմակերպէ , իւր նպատակէն ոչ-դուրս նիւթերու վրայ՝ դասախոսութիւններ եւ երեկոյթներ , որոնց ներկայ կրնայ դանուիլ Միութեան անդամներու կողմէ հրաւերուած ամէն անհատ :

ՅՈՐՈՒԱԾ 26.

Միութիւնը տարին մէկ անդամ կուտայ մեծ երեկոյթ մը՝ ի նպաստ իր սնառուկին :

ՅՈՐՈՒԱԾ 27.

Միութիւնը կը հիմնէ հայկական գրադարան մը , որուն հսկողութիւնը կը յանձնուի գրադարանապետին :

## ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Միտթինք կը լուծուի միայն այն պարագա-  
յին, եթե իր անդամներու թիւը հինգէն պակաս է

ՅՈՒՆԻՎԵՐՍ 29.

Լուծման պարագային , Միութիւնը կը հրաւ-  
ելիրուի արտակարգ Ընդհանուր Ժողովի մը , ուր  
բոլոր հաշիւներու քննութիւնէն ու ձգումէն յե-  
տոյ , Միութեան արամագրած գումարը կը յանձ-  
նըւի Փարփղի Հայ Եկեղեցւոյ Պատ . Հոգաբար-  
ձութեան , որ պարտի երկու տարի նոյնութեամբ  
պահել այդ գումարը եւ յանձնել Փարփղի մէջ  
կազմուող Հայ Ուսանողական Միութեան մը , ե-  
թէ այդ Միութիւնը ունի նոյն նպատակը որ ունէր  
լուծեալ Միութիւնը , եւ հաստատուած է կառա-  
վարութիւնէն : Հակառակ պարագային , յիշեալ  
Հոգաբարձութիւնը պարտի այդ գումարը Միու-  
թեանս անուամբ նուիրել Պոլսոյ Ս. Փրկչի Ազգ .  
Հիւնդանոցին :

203 3

ՀՀ Ազգային գրադարան



17342 NL0051150

